ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Թ Յ Ո Ւ Ն

17 նոյեմբերի 2011 թվականի N 167-Ա

ք. Հրազդան

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մարմարիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2011 թվականի նոյեմբերի 15-ի N 4 գրությունը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Մուշեղ Մաթևոսյանին*** 2011 թվականի նոյեմբերի 17-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մարմարիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2005 թվականի հունիսի 22-ին կնքված N 56 աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մարմարիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ ***Նախրա Մեփոյանի*** վրա՝ մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կողմից զբաղեցնելը:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մարմարիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ